ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/109

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 13.01.2021թ.),

Ա. Պարանյանի (լիազորագիր՝ տրված 13.01.2021թ.),

«Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Հարությունյանի (պետական գրանցման վկայական թիվ 271.110.1156570),

«Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Ա. Սոխակյանի (լիազորագիր՝ տրված 13.01.2021թ.),

Ա. Հովհաննիսյանի (լիազորագիր՝ տրված 18.01.2021թ.),

Հ. Հովհաննիսյանի (լիազորագիր՝ տրված 18.01.2021թ.),

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ

Տ. Սաֆարյանի (լիազորագիր՝ տրված 19.01.2021թ.),

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից 30.12.2020թ. ներկայացված (08.01.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.12.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով մրցույթի հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունները գլխավորապես ներառում են համակարգի մաս կազմող 28 ենթահամակարգերի ծրագրային ապահովման փոփոխությունների, նոր ծրագրային ապահովումների մոդուլների ծրագրավորման և գործարկման, ծրագրային ապահովման թարմացումների մշակման և գործարկման, նոր վեբ ծառայությունների մոդուլների ծրագրավորման և գործարկման, ինչպես նաև խորհրդատվական մի շարք այլ ծառայությունների իրականացումը:

Հաշվի առնելով, որ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով մրցույթի գնման առարկան ունի խորհրդատվական բնույթ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ հոդվածի 6-րդ կետը, ինչպես նաև Գնումների մասին օրենքի 44-րդ և 6-րդ հոդվածները՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցույթների հայտերի գնահատման ժամանակ մասնակիցները պետք է բավարարեն տվյալ խորհրդատվական ծառայությունները պատշաճ մատուցելու համար անհրաժեշտ ոչ գնային նվազագույն պայմաններին և ունենան տվյալ խորհրդատվական ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ մասնագիտական գործունեության

համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ:

ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01307389), որը հաշվառվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 24.12.2020թ., այսինքն՝ մրցույթի հայտերի վերջնաժամկետի (25.12.2020թ.) ներկայացման օրվանից մեկ օր առաջ, ակնհայտորեն չի բավարարում մրցույթի հրավերի գնման բնութագրով սահմանված խորհրդատվական ծառայությունների մատուցման համար գնումների օրենսդրության համաձայն անհրաժեշտ որևէ որակավորման չափանիշի:

Այսպիսով, «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով, խախտվել են Գնումների մասին օրենքի 6-րդ, 44-րդ հոդվածների, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 23-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգը բարդ, բազմաֆունկցիոնալ տեղեկատվական համակարգ է, որը բաղկացած է 28 ենթահամակարգերից, ապահովում է տեղեկատվության ստուգում և փոխանակում ՀՀ-ում գործող այլ պետական տեղեկատվական համակարգերի հետ, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային մարմինների հետ և հանդիսանում է առանցքային տեղեկատվական համակարգ պետական կառավարման ոլորտում:

Անհրաժեշտ մասնագիտական փորձ և որակավորում չունեցող ընկերության կողմից պետական կառավարման ոլորտում առանցքային նշանակություն ունեցող մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ոչ պատշաճ սպասարկումը և ծրագրային ապահովման փոփոխությունների իրականացումը կարող է կազմաքանդել ծրագրային ապահովումը, ներառյալ առկա տվյալների բազան և անդառնալի հետևանքներ ունենալ պետության համար»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է անվավեր ճանաչել «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. որոշումը և «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, գնումների օրենսդրության համաձայն որակավորման պահանջներին չբավարարելու հիմքով, գնահատել անբավարար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2021թ. ժամը 10:00-ին և 22.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված բողոքը և ներկայացրել վերլուծություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տեխնիկական բնութագրում նկարագրված ծառայությունները խորհրդատվական բնույթի են, քանի որ գլխավորապես ներառում են հետևյալ բաղադրիչները՝

- անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների իրականացման համար բիզնես վերլուծություն, անհրաժեշտ փոփոխությունների տեխնիկական մասնագրերի մշակում,
- ծրագրային ապահովման նոր մոդուլների ծրագրավորում/մշակում, թեստավորում, ներդրում, ինտեգրում, ուսուցում, ձեռնարկների թարմացում:
- կատարված ծրագրային փոփոխությունների փաստաթղթավորում և ծրագրային կոդերի տրամադրում Պատվիրատուին

Ստորև ներկայացնում ենք քաղվածք տեխնիկական բնութագրից՝ ընդգծելով ծառայությունների խորհրդատվական բնույթը

- համակարգերի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով անհրաժեշտ ոչ առանցքային փոփոխությունների իրականացում (համակարգերի ծրագրային փոփոխություններ, որոնք կապված են օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև մաքսային վարչարարության առանձին հարցերի լուծման հետ),
- համակարգերի օգտվողներին խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված խմբերի մոտ ծրագրային ապահովումների մասով ի հայտ եկած հարցերի շուրջ պարզաբանումների տրամադրում,
- սերվերների սպասարկման հետ կապված ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության համապատասխան աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում.

- նոր կոնֆիգուրացված սերվերները համակարգում առկա այլ սերվերների հետ համակցելու նպատակով խորհրդատվության տրամադրում,

- սերվերներում պարունակվող տեղեկատվության ամբողջականության և անվտանգության ապահովման կազմակերպման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,

- տվյալների շտեմարանի (ՏՇ) սպասարկման հետ կապված ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության համապատասխան աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում.

- ՏՇ-ի արխիվացման կազմակերպման խորհրդատվություն,
- ՏՇ-ի backup –ի կազմակերպման խորհրդատվություն,
- ՏՇ-ի օպտիմիզացման խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն

- նոր վեբ սերվիսների ստեղծում կամ գործող վեբ սերվիսների փոփոխում,
- համակարգերում սխալների/թերությունների հետազոտություն և դրանց շտկում, ներառյալ՝ ժամանակավոր լուծումների տրամադրում և թերությունների շրջանցում մինչև համակարգերի կարգաբերումները և թարմացումները,
- թարմացումների մշակում, թեսթավորում, տեղադրում,
- ծրագրային ապահովման նոր տարբերակների տրամադրում և տեղադրում, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի և նյութերի թարմացում: Բոլոր ծրագրերի փոխադարձ համագործակցությունը լիարժեք նկարագրող տոպոլոգիայի տրամադրում, որում կնկարագրվի ծրագրերի միջև փոխադարձ կապը ինչպես նաև ծրագրերի կապը ՏՇ-ի հետ:
- համակարգերի կարգավորում, երբ դրա անգործելիությունը վերագրվում է ծրագային թերություններին կամ սխալներին,
- համակարգերի օգտվողների սպասարկման Help Desk ծառայության տրամադրում:

Տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցում բերված 41 Պահանջների գերակշռող մասը նույնպես վերաբերում են ծրագրային ահահովման մշակման, թեստավորման, ներդրման, ուսուցման, փոփոխությունների փաստաթղթավորման պահանջներին:

Օրինակ՝

ՊԱՀԱՆՋ 4 Համակարգերի վերակառուցման կամ ձևափոխման ծառայությունները պետք է նախատեսեն տեխնիկական նկարագրերի (technical specification) մշակում կամ դրանցում համապատասխան փոփոխությունների իրականացում: Համակարգերի տեխնիկական նկարագրերը պետք է մշտապես լրամշակվեն՝ գործառութային, օրենսդրական փոփոխությունների և այլ գործոններով պայմանավորված համակարգերի վերակառուցման կամ ձևափոխման դեպքում:

ՊԱՀԱՆՋ 5 Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն թեստային միջավայրում:

ՊԱՀԱՆՋ 6 Համակարգի ընդունման թեստավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն Կատարողի հատուկ համակարգում,

որին մուտք պետք է տրամադրվի ՀՀ մաքսային մարմնի համապատասխան աշխատակիցներին: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket), որը կներառի խնդրի/թերության մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին):

ՊԱՀԱՆՋ 7 Համակարգերի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևայլ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեսթավորման տեսակները:

ՊԱՀԱՆՋ 8 Կատարողը պետք է իրականացնի վերակառուցված կամ ձևափոխված համակարգերի վերաբերյալ ուսուցումներ:

ՊԱՀԱՆՋ 9 Կատարողը մինչև համակարգերի ներդրումը պետք է ներկայացնի ուսուցման ծրագիր:

Ուսուցման ծրագիրը պետք է կազմված լինի՝

Համակարգից օգտվողների ուսուցման սկզբունքով,

Վերապատրաստողների վերապատրաստման սկզբունքով,

ՀՀ մաքսային մարմնի ՏՏ ոլորտի աշխատակիցների ուսուցման սկզբունքով:

ՊԱՀԱՆՋ 17 Կատարողը համակարգերի մշակման, զարգացման, փոփոխությունների և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ:

ՊԱՀԱՆՋ 18 վերակառուցված համակարգերը պետք է ներդրվեն երեք առանձին միջավայրերում՝ արտադրական, թեստավորման, պահուստային:

ՊԱՀԱՆՋ 33 Կատարողի տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգերի և/կամ վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը»:

<u>2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 11.01.2021թ. թիվ 1/18-2/165-2021 գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է 08.01.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10-2021 գրությամբ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2021թ. ժամը 10:00-ին և 22.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից 13.01.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթը (այսուհետ՝ մրցույթ):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. որոշմամբ (այսուհետ՝ որոշում) Ընկերությունը ճանաչվել է մրցույթի պահանջներին բավարարող ընկերություն:

Հիմնադրամի կողմից 30.12.2020թ. ներկայացվել է ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 ծածկագրով բողոքը, որով ներկայացվել են որոշումն անվավեր ճանաչելու և Ընկերության հայտը անբավարար գնահատելու պահանջներ:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները կայանում են հետևյալում. ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 23-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն

խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցույթների հայտերի գնահատման ժամանակ մասնակիցները պետք է բավարարեն տվյալ խորհրդատվական ծառայությունները պատշաճ մատուցելու համար անհրաժեշտ ոչ գնային նվազագույն պայմաններին և ունենան տվյալ խորհրդատվական ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, իսկ Ընկերությունը հաշվառվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 24.12.2020թ., ուստի և չի բավարարում մրցույթի գրավերի գնման բնութագրով սահմանված խորհրդատվական ծառայությունների մատուցման համար գնումների օրենսդրության համաձայն անհրաժեշտ որակավորմանը:

Այսպիսով՝ բողոքի հիմքը կայանում է նրանում, որ Ընկերությունը գրանցվել է մրցույթի հայտերի վերջնաժամկետի օրվանից մեկ օր առաջ, ուստի և չի բավարարում մրցույթի հրավերի գնման բնութագրով սահմանված խորհրդատվական ծառայությունների մատուցման համար գնումների օրենսդրության համաձայն անհրաժեշտ որևէ որակավորման չափանիշների:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ բողոքն ամբողջովին անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»:

Վերոնշյալ իրավանորմերից բխում է, որ մասնակցին կարող են հրավերով առաջադրվել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հետևյալ պայմանները՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Միևնույն ժամանակ, ո՛չ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ո՛չ էլ Կարգով սահմանված չեն, որ մրցույթի հրավերի մեջ պարտադիր պետք է նշվեն վերը նշված պայմանների նվազագույն չափանիշները (թե մասնակիցը քանի աշխատող պետք է ունենա, ինչպիսի տեխնիկական կամ ֆինանսական միջոցների պետք է տիրապետի, քանի տարի պետք է աշխատած լինի առնչվող ոլորտում), և յուրաքանչյուր մրցույթը կազմակերպող պետական մարմին ինքնուրույն է որոշում հրավերում նախատեսվող պայմանների շրջանակը՝ ելնելով յուրաքանչյուր գնման առանձնահատկություններից:

Բացի այդ, պրակտիկան ևս ցույց է տալիս, որ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման դեպքում նման պահանջներ դեպքերի մեծ մասում չեն սահմանվում, եթե ոլորտը չի վերաբերվում լիցենզավորվող գործունեություններին (ինչպես օրինակ՝ բժշկական բնույթի ծառայություններ), ինչն առկա չէ մեր դեպքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասից ուղղակիորեն բխում է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք նախատեսված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, խտրական են և սահմանափակում են մրցակցությունը և համարժեք չեն:

Բողոքաբերի հիմնավորումից բխում է, որ մասնակից ընկերությունը պետք է լինի երկար ժամանակ գրանցված, և իբր դա կարող է երաշխավորել մասնակցի որակավորումը: Գտնում ենք, որ նման դիրքորոշումը լիովին անհիմն է, քանի որ մասնակից ընկերության՝ որոշակի ժամանակահատված առաջ գրանցված լինելու պայման

սահմանված չէ ոչ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ոչ Կարգով, և ոչ էլ մրցույթի հրավերով: Ընկերությանը նման պահանջի առաջադրումը՝

1. Նախատեսված չէ օրենսդրությամբ, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով:

2. նման պայմանի սահմանումը խտրական է և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին: Անհիմն է այն կանխավարկածը, թե վաղուց գրանցված ընկերությունն ունի բարձր որակավորում և բավարարում է հրավերի պահանջներին, իսկ նոր գրանցված ընկերությունը չունի որակավորում և չի բավարարում հրավերի պահանջներին: Նման պայմանն ընդհանրապես ենթակա չէ դիտարկման, քանի որ Գնահատման հանձնաժողովն արդեն իսկ եկել է եզրահանգման, որ Ընկերությունը բավարարում է մրցույթի հրավերի պահանջներին:

3. համարժեք չէ՝ ուղղակիորեն չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից: Շուտ գրանցված լինելու պայմանը որևէ կերպ չի բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Հավաստիացնում ենք, որ Ընկերության գործունեությունը համապատասխանում է մրցույթի առարկա հանդիսացող գործունեությանը, ունի անհրաժեշտ մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ և տիրապետում է անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական միջոցների: Չի եղել որևէ մրցույթի հրավերով սահմանված որևէ պահանջ, որին Ընկերությունը չի համապատասխանել: Մրցույթի հրավերով սահմանված բոլոր պահանջները պահպանված են եղել, ինչի արդյունքում Ընկերությունը ճանաչվել է որպես հրավերի պահանջներին համապատասխանող:

Հետևաբար այն հանգամանքը, որ Ընկերությունը նոր գրանցված կազմակերպություն է, որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ նրա որակավորման և հրավերի պահանջներին բավարարության մասով:

Խնդրում եմ ի գիտություն ընդունել նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը ներկայումս արդեն իսկ ունի թվով 10 (տաս) աշխատակից, այդ թվում՝ տնօրեն (ով միաժամանակ Ընկերության համահիմնադիրն է և հանդիսանում է ոլորտի մասնագետ, ծանոթ է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգին) վերլուծաբաններ, ծրագրավորողներ, թեստավորողներ:

Կից ներկայացնում ենք «Ֆիպ Սոֆթվեր» ՍՊԸ-ի 21.01.2021թ. տեղեկանքը, որով հավաստվում է, որ Ընկերության ներկայիս թվով 4 (չորս) աշխատակից աշխատել են «Ֆիպ Սոֆթվեր» ՍՊԸ-ում և մասնակցել «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի ստեղծման աշխատանքներին: Բացի այդ, Ընկերության տնօրենը և գլխավոր բիզնես վերլուծաբանը մասնակցել և իրենց մեծ ներդրումն են ունեցել Բողոքաբերի մատնանշած համակարգի մաս կազմող 28 ենթահամակարգերի ստեղծմանը և մշակմանը:

Բողոքաբերի կողմից ներկայացված բողոքը խոչընդոտում է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեին ծառայություններ մատուցելու ընթացակարգին, ինչը կարող է հանգեցնել պետության համար կենսական նշանակություն ունեցող պետական մարմնի աշխատանքի գործընթացին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է մերժել «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոքը:

4. <u>ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից 14.01.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոքի շրջանակներում ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը որպես կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Բողոքի ուսումնասիրությունը հանգեցնում է նրան, որ ըստ էության բողոքարկվում է թե ինչու գնահատման այս կամ այն չափորոշիչները հրավերով սահմանված չեն եղել քանի որ սա խորհրդատվական ծառայություն է, սակայն այս պահին ժամանակավրեպ է այդ

հարցի քննարկումը, քանի որ վիճարկվում է հրավերի պահանջ, իսկ հայտերն արդեն բացվել են և օրենսդրությամբ էլ հստակ ասվում է, որ դեպքում բողոքն ինչ կարգով կարող է ներկայացվել: ՀՀ վերահսկողական ծառայությունը ուսումնասիրել է «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և կից փաստաթղթերը և գտնում է, որ դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին և մերժման հիմք առկա չի եղել»:

5. ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար **մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման** նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին և «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ին հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի 30.12.2020թ. ներկայացրած բողոքը, Պատվիրատուի կողմից 11.01.2021թ. թիվ 1/18-2/165-2021 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ***<u>մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով</u>*** հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Հարմոնիա» տեղեկատվական

տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին և «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ին հարվերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ ճանաչելու վերաբերյալ:

Անդրադառնալով «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի բողոքով վկայակոչված այն հանգամանքին, որ *«ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով մրցույթի գնման առարկան ունի խորհրդատվական բնույթ և համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ հոդվածի 6-րդ կետի, ինչպես նաև Գնումների մասին օրենքի 44-րդ և 6-րդ հոդվածների՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով անցկացվող մրցույթների հայտերի գնահատման ժամանակ մասնակիցները պետք է բավարարեն տվյալ խորհրդատվական ծառայությունները պատշաճ մատուցելու համար անհրաժեշտ ոչ գնային նվազագույն պայմաններին և ունենան տվյալ խորհրդատվական ծառայությունները մատուցելու համար անհրաժեշտ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, հետևաբար «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 01307389), որը հաշվառվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 24.12.2020թ., այսինքն՝ մրցույթի հայտերի վերջնաժամկետի (25.12.2020թ.) ներկայացման օրվանից մեկ օր առաջ, ակնհայտորեն չի բավարարում մրցույթի հրավերի գնման բնութագրով սահմանված խորհրդատվական ծառայությունների մատուցման համար գնումների օրենսդրության համաձայն անհրաժեշտ որևէ որակավորման չափանիշի՝* հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթը հայտարարվել է իր կարիքների համար ***մաքսային միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով:***

Տվյալ դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվել անհրաժեշտ մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը համապատասխանության, մասնագիտական փորձառության, աշխատանքային ռեսուրսների և տեխնիկական միջոցների պահանջ, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն

հրավերը կազմել է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն և իր կարիքին համապատասխան:

Հետևաբար, Ընթացակարգի հրավերով նման պահանջ սահմանված չլինելու պայմաններում, իսկ հայտերը, համաձայն Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, գնահատվում են հրավերով սահմանված կարգով, արձանագրում եմ, որ «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և այն հանգամանքը, որ Ընկերությունը նոր գրանցված կազմակերպություն է, որևէ կերպ չի կարող ազդեցություն ունենալ նրա՝ հրավերով սահմանված պահանջներին բավարարելու մասով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.12.2020թ. որոշումը՝ «Ինովայզ սիսթեմս» ՍՊԸ-ին հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, իրավաչափ է և չի հակասում վերը շարադրված իրավական նորմերով սահմանված պահանջներին:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացվել է միջնորդություն «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան կայքից արտատպված փաստաթուղթը Պատվիրատուից պահանջելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.01.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ-2/367-2021 գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել ԳԲՔԱ-ՆԳ-2020/109 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ սեղմ ժամկետում տրամադրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/5» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան կայքից արտատպված փաստաթուղթը:

Պատվիրատուն 15.01.2021թ. թիվ 1/18-2/1568-2021 գրությամբ տրամադրել է պահանջվող տեղեկատվությունը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ այն հրապարակվել է օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից 30.12.2020թ. ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից 30.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**